

մատոյց, որ ասի թէ՛ այն տեղն է սընարքն ուր նստէր հրեշտակն, որպէս պատմէ աւետարանին՝ թէ մինչ խոնարհեցաւ մարիամ Մաղդաղենացին ի գերեզմանն, ետես երկուս հրեշտակս սպիտակս՝ զինքստէին մի ի սնորից, եւ մի յանոտից, ուր կայր մարմինն Յիսուսի։ Եւ սեղանն եւ է յարտաքոյ յարեմտեան կողմանէ, կից ընդ տէրունական գերեզմանին, եւ է ի ձեռս Ղփտոց ազգի։»

«Եւ հանդէպ այսմ մատուոյն ի յարեմտեան կողմն գոյ փոքրիկ եկեղեցի մի, կառուցեալ ի սուրբ Աստուածածնա անուան, յորում գոյ գերեզման Յովսէփայ

Արեմթացոյն փորեալ ի վիմէ հարուակողմն եկեղեցոյն, զի վասն առաւել սիրոյն, զոր ունէր առ Քրիստոս, յետ թողելոյ զՔրիստոս յիւրում պարտիզի՝ եւ յիւրում գերեզմանի, պատրաստեաց կըրկին գերեզման անձին իւրում, յետ կոյս գերեզմանին Քրիստոսի՝ յարեմտեան կողմանէ, եւ ունի սեղան մի, որ թէպէտ ի ձեռս Ասորոց ազգին է, բայց մեր հայոց ազգէն լուսաւորի, եւ յամէն Գ (երեք) շաբթի անդ մատուցանին զպատարագն։» (Կ'աւարտի էջ 126ա տող 4)։

(Վերջ յաջորդ թիւով)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ՀԱՅԵՐԷՆԻ ՀԱՐՑԵՐ

(Պատասխանս Հ. Ա. Ղազիկեանին)

9. Սեպր գրելը (վեւոյ, բոլոր օտար յատուկ անուններուն մէջ) աւելի ապահով է, գրած էի, քան Հ. Ա. Ղ. ի Սեւրը, քանի որ եւ հայերէնի մէջ համազօր եղած է եօ-ի (արդեւ = արդեօք), եւ Սեւր պէտք է որ Սեօր կարգացուի։ Հ. Ա. Ղ. կ'առարկէ թէ Խորա(յ)էլ եւ Սա(ւ)ուղ ալ օտար անուններ են, բայց նախնի հայերը անոնց մէջ մէկմէկ գիր ալ տնկած են ըստ հայկական հնչազրուի։ Ուստի Սեւր գրելու է ըստ նախնեաց կերպին։ Կ'անցես թէ եւ = եօ ալ նախնեաց կերպ է, որով կըրնանք գրել նաեւ Սեօր, ըստ իր առարկին։

Հակառակ որ ցոյց տուած էի թէ հայ հին եւ նոր հնչաբանութեան մէջ փոփոխութիւն կայ, զոր պէտք է նկատի առնել ըստ Մեսրոպի հնչազրման հիմնական սկզբունքին՝ Հ. Ա. Ղ. կ'անցես զայն. ըսել է ինք մէկմէկ լինել մտնելով կը գրէ եւ ոչ այնպէս ինչպէս «այդ ազգը կը հնչէ»։ Տա(ւ)ունինկ Սթրիթ, րա(ւ)ունտ, Ռա(ւ)ուլ, Պրա(ւ)ուն, Պրա(ւ)ունինկ, Փա(ւ)ուսթ, Շթրա(ւ)ուս, հուայթ հա(ւ)ուս, Պէյտըն փա(ւ)ուէլ, Քա(ւ)ուցքի, եւայն, Արեմթացոյն փորեալ ի վիմէ հարուակողմն եկեղեցոյն, զի վասն առաւել սիրոյն, զոր ունէր առ Քրիստոս, յետ թողելոյ զՔրիստոս յիւրում պարտիզի՝ եւ յիւրում գերեզմանի, պատրաստեաց կըրկին գերեզման անձին իւրում, յետ կոյս գերեզմանին Քրիստոսի՝ յարեմտեան կողմանէ, եւ ունի սեղան մի, որ թէպէտ ի ձեռս Ասորոց ազգին է, բայց մեր հայոց ազգէն լուսաւորի, եւ յամէն Գ (երեք) շաբթի անդ մատուցանին զպատարագն։» (Կ'աւարտի էջ 126ա տող 4)։

կամ մէկ մէկ յիւով՝ Պօ(յ)էր, Նօ(յ)էլ, Բայց Հ. Ա. Ղ. ինք իրեն ալ կը հաւկասէ. ինք չէ՛ր որ «սոսկում» որակեց նախնեաց վեւոյ գրած Յովր, Յակովր, Հոռով եւայն ձեւերը, ինչպէս վերը տեսանք «արնոտ» ի առթիւ։

Եթէ հինը կը պաշտպանէ ինչո՞ւ չը գրեն Յովր, Յակովր, Արսենիոս Ղազարոսիկեան եւայն։

Հ. Ա. Ղ. ի առարկը թէ արդեւք-ին հնազոյն ձեւը արդեաւք է՝ չի հերքեր եւ = եօ իրողութիւնը, որով խնդրին կապ ու կշիռ չունի, ճիշդ ինչպէս որ տունը չինելու վրայ ունէ ազգեցութիւն չունի թէ կրաքարը սարէ՞ն բերուած է թէ ձորէն։

Կապ ու կշիռ չունի իր միւս առարկն ալ թէ հիները գրած են նաեւ միւս, եղջեւր (միւս, եղջիւր), առով ըսելով թէ եւ = իւ. ասկէ լինչ կ'իւլէ, թէ Սեւրը Սիւր ալ կարելի է կարգաւ. — աւելի գէշ իրեն համար։ Փաստ մը եւ թէ Սեվր-ը ամենէն ապահով ձեւն է որ միայն ու միմիայն Սեվր կը կարգացուի, ինչպէս որ «այդ ազգը այդպէս կը հնչէ»։

10. Լարիթ, Տըլաթիս ձեւերը աւելի ապահով ու անշփոթ գտած էի քան Հ. Ա. Ղ. ի պատգամած Լարիւ (իւ-ը հոս ձայնաւոր կարգալու վտանգը կայ) եւ Տըլաուս, (Քրաններէն թէ՛ ue եւ թէ՛ ou հայերէնի մէջ ո՛ւ պիտի հնչազրենք... առ քեզի թնճութ մ'ալ)։ Յոյց տուած էի թէ սկզբունք ընելու է օտար բառերում ձայնաւոր իւ-ը միշտ

իւ գրել, և բաղաձայնով իմ-ն ալ (Հ. Ա. Ղ. ի խ-ը) միշտ իմ գրել. ասով ունէ մէկը չի սայթաքիր, նոյնիսկ նախակրթարանի աշակերտն ալ: Հ. Ա. Ղ. խիղճ կ'ընէ հաստութեանց ու չփոթութեանց մատնել հայերէն կարգացող հայերն ու օտարները, և մեր նորահասներուն սխալ հնչումներ սովորեցնել որոնց վրայ կը ծիծաղին օտարները, թէ՛ հայերէն այբուբենին ճոխութիւնը ա'լ ո՞ր մնաց, քանի որ պարզ Delarue մը չի կրնար չիտակ հնչադրել: Այո՛, ան այս ամէնը կ'ընէ որպէսզի իր խօսքը ըլլայ, և որպէսզի իր գերաշնչած տեսարանական պատկերացումներուն հնազանդած ըլլայ, մոռնալով լսարանականները որ անշուշտ աւելի առաջ ու կարեւոր են միւսէն, լեզուի հնչադրման միջոցին: Այսպէս՝ ըստ իր պատգամատուի թմբուկին՝ պէտք է որ մեր ականջի թմբկիկները չըրողքեն երբ լսեն Բու Լաֆայէթ կամ Ալընու Քուպրի (փոխանակ rue և avenue-ի): Եւ քանի որ «Ֆրանսացուն ժէզիւ դրածը (ուղէ ժէզիւ) մենք ու-ով Երիտւս կը գրենք», ուստի Փրանսացուն Պոսիւէ-ն ալ գրելու ենք եզեր Պոսիւէ, մանաւանդ որ սա յոռաջ եկած է լսն. պոս սուէթուս-էն (ուղէ՛ սուէթուս) որ ու-ով կը գրուի, չէ՞ որ լատիներէնը արդէն իւ չունի: Զքնաղ արամաբանութեանց օգտակում մը, որուն փուտ ու սուտ օգտակները հատիկ հատիկ պիտի փշրին հիմա:

Հայր Արսէն, մենք Ժեզիւ-ն Փրանսացիէն չափիք որ անո՛ր իւ-ն ու-ի փոխած ըլլանք. մեր Երիտւս գրել սկսած օրը ո՛չ Փրանսերէն կար, և ոչ ալ Փրանքները քրիստոնեայ եղած էին որ Ժեզիւ գրէին: Իսկ Պոսիւէ-ն Փրանսացի է, և իր անունն ալ Փրանսացիներէն եկած մեզի, զոր պէտք է Պոսիւէ գրենք «քանի որ այդ ազգը այդպէս կը հնչէ»: Այս ի՛նչ հակասութիւն, քանի՛ չափ, քանի՛ կշիռ:

Բառերը, անունները գրելու ատեն ստուգաբանական ճշգրտութիւնը չէ որ կը պահենք, այլ արդի հինջը, այլապէս՝ ստուգաբանութիւնը գոյութիւն չէր ունենար, քանի որ բառին ծագման ձեւը նոյն պիտի մնար յաւիտեան: Եւ այն ատեն Վահրամը Բահրամ պիտի գրէինք, Սահակը՝ Իսահակ, Յովհանը՝ Յովհաննէս, Արսէնը՝ Արսենիոս, և մեր գրագէտ ու բանաստեղծ երկու Զուպէններն ալ Իզապէլլա պիտի ստորագրէին:

Հ. Ա. Ղ. նեղութիւնը յանձն կ'առնէ փաստելու թէ բիւ-ը կարելի է rive կարգալ. այդ պարզ է արդէն. բայց կարելի է նաեւ rue կարգալ, քանի որ իւ ձայնաւորին համար հայերէն ուրիշ նշան մը չունինք: Իսկ rue բառը բու գրելը ըստ իր պատգամին, միշտուիչս եւ միայն ու մի միայն սխալ ընթերցում կը պատճառէ: Ըստ իրեն՝ լուազոյն է որ միշտ սխալ հնչեն բոլոր ուսեալներն ու թերութիւնները, քան թէ երբեմն սխալ հնչեն միայն թերութիւնները: Պարզ է ուրեմն որ բիւ ձեւը նախընտրելի է «ստակում» բու-էն զոր պէտք է գրենք իբր roue-ին հինջը:

Հ. Ա. Ղ. կը տրամաբանէ թէ քանի որ ժողովուրդը արիւնը արուսն կը հնչէ (ո՛չ միշտ և ո՛չ ամէն տեղ), ուստի rue-ն ալ թող բու հնչէ, և Delarue-ն ալ Տըլաուու: Նորէն սխալ ընդհանրացում. արիւնը արուսն կամ արին կը հնչեն, բայց միւս-ը ո՛չ մուս կը հնչեն ո՛չ ալ միւս, ո՛չ ալ հիւր-ը հուր կամ հիւր, ոչ ալ բարութիւն: Շատ շատ Յարութիւնը փոխած է Արթին, Արութ, Արօ, Արութիկ, Արթօ: Պատճառն այն է որ բառ մը ժողովրդին բերին մէջ ձևափոխուելու համար երկար ժամանակ գործածական եղած ըլլալու է, իսկ «պատահական» (բառը իրն է) Տըլաուու բառը քանի՞ հայ գործածեց, ո՞րքան ատեն է ի վեր, և կեանքին մէջ քանի՞ անգամ: Հաւասարելուն մ'ալ տա: Կը տեսնուի թէ նա չիտակը ձգեմ իր գլխէն սխալ օրէնքներ կը հանէ:

Յետոյ կը սկսի Հ. Ա. Ղ. ի այլապէս հակասութիւնը. — Կը գրէ. «արիւն-արուսն-ին պէս Delarue բառն ալ ինչո՞ւ Տըլաուու պիտի չընէր ժողովուրդը. թող չընէ. թող գրուի Տըլաուու եւ կարգայ Փրանսական հնչումով. . . բառարաններուն մէջ գրողը ստիպուած է du-ին գէմ տիւ գնել. (վե՛ր-ջապէս. . .). հոս անհրաժեշտ է գնել. հըն-չման խնդիր է (բառերը գրելը ե՛րբ հըն-չման խնդիր չէ որ). եթէ պատահական յատուկ անուններ հանդիպին այդ ձայնով (իմ ըսածս ալ արդէն այդ օտար յատուկ անուններու մասին էր, որ միշտ պատահական են) հակառակութիւն մը չունիմ, թող գրուի այդպէս»: Եթէ ես ալ Հայր Արսէնի ոճը գործածէի պիտի հարցնէի թէ՛ գրպանի՞ բառարաններուն մէջ

ինչպէս գրելու է և խոշորներուն մէջ ինչպէս. լրագրներուն մէջ ինչպէս և հանդէսներուն մէջ ինչպէս...

Արդ՝ աշակերտը բառարանին մէջ պիտի կարդա *vue* բիւ. և եթէ պատահի որ Հայր Արսէնի անմիջական կամ հեռուոր աշակերտներէն մէկէն նամակ մը ստանայ որ հասցէ մը պարունակէ հայտատա՝ բուկափայէթ, ինք ինչպէս պիտի գրէ այդ հասցէ, *roue*, թէ *rou, roux, rous, rout, roud, roup, rouz*...

Հ. Ա. Ղ. ահամայն-կամայ Տըլառիւն թուլաարեց, բայց կ'ըսէ ճշնաբ կրնար Պոսիւէ գրել, զի բառը Պոսիւէն է. այդ գըրութիւնը այսպէս միայն կրնայ կարգացուիլ: (Դիտեցէք թէ Հ. Ա. Ղ. բուն ըսել ուզած հինչը յստակ ներկայացնելու համար ստիպուեցաւ գործածել վեպ տառը, ստով ընդունելով անոր հինչին աւելի ապահով և անսայթաք ըլլալը): Դարձեալ անհետում. Պոսիւէ չիտակ ալ կրնայ կարգացուիլ. իսկ իր առաջարկած ձեքածու Պոսուէն ալ երկվանկ կը կարգացուի Պոսուէ, ինչպէս՝ հանուէ, հագուէ, կորուէ: Հոս ալ Հ. Ա. Ղ. միշտ սխալը կը գերադասէ երբեմն սխալէն: Պարզ է որ Պոսիւէ ձևին հակառակելու պատճառ մը չկայ բացի, դուցէ, այն որ պոս սուլութուս... Ժրաջան եղ կը նշանակէ, իսկ եղը մտիւր է ճշգրտքին մէջ առանց Հ. Ա. Ղ. ի հրամանին:

Ես Հայր Արսէնին տուած ոչ-պարագայական պատգամատ սկզբունքները կիրարկութեան փորձաքարին զարնելով ցոյց տուած էի անոնց անտեղի հետեանքները. ինք «ծայրայեղութիւն» կը կոչէ այդ ըրածս. այդ կը նշանակէ ձեծուած խնդրին (խնդրին, ոչ թէ... անձերուն) մասին իր տէսակէտը կազմելէ կամ արտայայտելէ խուսափել, կամ սխալը չընդունել:

11. Անուան, անտանոց թուլատրելի համարած էի, ցոյց տալով նախընթացներն ալ, և փաստելով թէ ինչպէս ձայնաւորէ առաջ կամ վերջ (սուլատ) նոյնպէս բաղաձայնէ ալ առաջ (առտու, առթիւ) ու հնչելը հնչարանական կարելիութիւն է, որով ոմ յանդին քակումի պարագային ունի բէի փոխելը հնչարանորէն անհրաժեշտ է: Հ. Ա. Ղ. Ժիմուան, լեռնամիջուրիւն և լոյնն օրինակներուս զէմ բան չ'ըսեր, որով

յիշեալ հնչարանական կարելիութիւնն ու իրողութիւնը ընդունած կ'ըլլայ: Իսկ միւս օրինակներուն համար կ'առարկէ թէ՛ դառին, բեռին, գառին, սառին և ձեռք առյով գրուած են, որպէսզի բէով գրուածը չշփոթենք զարին, զարին, սարին, բերին, ձեր(ք) բառերուն հետ: Իրաւ է որ լեզուն մերթ կը զիջի իր երկրորդական կանոնները ի սեր իր զլխաւոր հիմին՝ յստակութեան, առանց որու լեզու գոյութիւն չունենար. բայց Հ. Ա. Ղ. ի առարկած բառերուն մէջ միայն մէկ երկու հոլով կրնան չփոթութիւն առթիւ և յստակութիւնը խանգարել, իսկ մնացեալ հոլովներուն մէջ ոչ. արդ՝ Հ. Ա. Ղ. ըսել կ'ուզէ թէ մէկ երկու հոլովի յստակութեան համար (թող որ արդէն խօսքին իմաստէն կը հասկցուի թէ խընդիրը գառին կամ զարին վրայ է) լեզուն կը զոհէ մնացեալ հոլովներուն մէջ բառին ինքնութիւնը և արմատական բաղաձայնն իսկ կը փոխէ: Համոզիչ չ'երևիր այս: Այսպէս՝ կը գրենք նաև ի բեռանէ, գրեռինս, բեռանց, բեռամբ, բեռամբք, ի գառանէ, գառամբ, գառինք, զգառինս, գառանց, ի գառանց, գառամբք, առանց ունի բէի փոխելու, հակառակ անոր որ առանց բէով գրուածները այլևս չփոթելի չեն ուրիշ բառերու հետ:

Հ. Ա. Ղ. կ'ըսէ նաև թէ ունէն վերջ ձայնաւոր պէտք է, (ուրեմն ինչո՞ւ կը հակառակի ամառանոց-ին), իսկ երբ բաղաձայն գայ՝ բէի կը փոխուի, ինչպէս ձեռամբ բայց ձերբակալել: (Կա՛ւ, բայց ինչո՞ւ բայցառիկօրէն-ին զէմ կը նախընտրէ բացառիկօրէն-ը. հակասութիւն): Սակայն հարկ է նկատի առնել թէ ունինք նաև ձեռքակալել և ձեռքացի ձեռքը՝ ուսով: Հետագայ օրինակներն ալ ցոյց կուտան թէ բաղաձայնէ ալ վերջ ու գալը հնչարանական կարելիութիւն և իրողութիւն է. — առձեռն, բառգիրք, առջև, առթիւ, առթիւ, առերեսն, առժամեայ, առլի, առկախ, առկայծ, առտինն, առտու, կառք, վաճառք, եռք, փառք, բեռինն, բեռկիր և այլն: Գուցէ Հ. Ա. Ղ. առարկէ թէ առտնք արմատ բառ չեն. սակայն այդ առարկը և բառակազմական օրէնքը չեն կըրնար ժխտել հնչարանական կարելիութիւնը որ ծագումով և կարգով աւելի առաջ է քան պաշտօնական քերականութիւնը:

Հ. Ա. Ղ. գլխավար տրամաբանութեամբ մը կը հետեցնէ թէ ուրեմն եւ գրեւոր եւ նաեւ դառձայ, ընթեացայ. բայց ասոնց արմատն է դարձ եւ ընթերց, բէ-ով. իսկ եւ չըսի թէ արմատական բէն ռաի փոխենք, այլ թէ արմատական աւան կրնանք իր ինքնութեանը մէջ պահել: Անճիօղ վերադրում:

12. Հեղինակումը է-ով գրել թուլատրելի համարած էի (հեղին բառէն): Հայր Արսէն կ'ըսէ թէ հոլովը կը գրենք հեղինի, բայց ամանցուածը՝ հեղինական: Բայց քանի որ հնչարանքէն տարբերութիւն մը չկայ միջևին, ինչո՞ւ գրօրէն պիտ' ըլլայ: Եւ ան՝ առիթը գտած է ինծի երկարօրէն բացատրելու թէ ինչպէս որ ե կը փոխուի ի, եւ՝ ե, ոյ՝ ու եայլն, նոյնպէս ալ ե կը փոխուի ե: Բայց կ'անտեսէ թէ այդ համեմատումը սխալ է, որովհետեւ երբ պարտեղը պարտիզպան կուտայ՝ հոտ հնչման զգալի փոխում մը կայ, բայց երբ կ'ըսենք հեղին՝ հեղինական՝ հնչման փոխում պատահեցա՞ւ. ո՛չ. ուրեմն ինչո՞ւ գրի փոխում պատահի, ի՞նչ բանաւոր պատճառով: Նախնեաց ժամանակ եւ է տարբեր հինչ ունէին, իսկ այսօր գրականութեան մէջ՝ չունին. երբեմն բարբառներու մէջ միայն ունին զոր սակայն գրականութիւնը չէ որդեգրած:

13. Հովուի ձեւը աւելի պարզ գտած էի, եւ համաձայն՝ ինի լորուսման կանոնին: Հ. Ա. Ղ. այդ կարգաւոր հանգերձ դեռ կը հարցնէ. «ո՞ր կանոնին». անձնուում: Եւ առարկելու սիրոյն՝ կ'ըսէ թէ հոտ ի չկայ այլ իւ, գիտնալով հանգերձ թէւը բաղաձայն է հոս, ինչպէս ինքն ալ five-ը բիւ գրեց, այսինքն ֆրանս. v բաղաձայնը = ւ:

Կ'առարկէ նաեւ թէ երբ ինին ձգելով գրենք հաշուիլ, պատուիլ, այդ պարագային այս բառերը պիտի կարգացունին . . . հաշուիլ, պատուիլ: Համբերոնք բեր որ դիմանայ: Ա՛յ Հայր Արսէն, երբ կատուն կը գրէք՝ կատովի՞ն կը կարգաք, թուելը թովել՞, նուէրը նովէ՞ր, խմբուինը խմբովին, բոլորուինը բոլորովին, բուինը բովին, սուինը սովին. . . Ինչո՞ւ այս խեղաբիւրումը, կշիռի եւ չափի այս երկուութիւնը:

Հայր Արսէն կը պնդէ թէ հովուութեան,

թիւն, հովուութի, անպատուութիւն ձեւերուն մէջ «ո՛չ տղեղութիւն կայ, ոչ անհարթութիւն եւ ոչ ալ կարճութիւն» (երկարութիւն ըսել կ'ուզէ): Իսկապէս զարմանալի ակնոց. ո գրին աւելի ըլլալը երկարութիւն չէ՞. քովքովի երկու ու-երէն մէկին բաղաձայն եւ միւսին ձայնաւոր ըլլալը տղեղութիւն եւ անհարթութիւն չէ՞: Անձնում:

14. Ձիտիւր ձեւը թուլատրելի գտած էի, պատճառաբանելով թէ երբ՝ չեմ ի խօսիլ, չեմ ի խօսիլ, չենք ի խօսիլ, չէք ի խօսիլ, չեն ի խօսիլ-էն անխտիր ինկած է ինի նախդիրը, ի՞նչ հիման վրայ պնդել թէ մնացած եզ. գ. դէմքէն չէ ինկած այդ ինիւն. մանուանդ որ այս նախդիրը գրեթէ վերցած է աշխարհաբարէն: Հ. Ա. Ղ. զարմանալի ճապուհութեամբ մը կ'ըսէ թէ ի խօսիլ բայէն հ-ն չէ որ ինկած է եւ ինին մնացած, այլ չի ի ձեւը չի դարձած է. ա-սով ըսել կ'ուզէ թէ տղանին մէկ ոտքը կոտրած է ըսելը սխալ է, այլ պէտք է ըսել թէ երկոտանի աղանին պարզապէս . . . միտանի փոխուած է: Սակայն ա-սով խնդիրը չմեկնուիր, քանի որ, ինչպէս տեսանք, այդ բայի ձեւերէն ի նախդիրը միշտ ինկած է: Եւ զարմանալի է որ, ըստ իր պնդումին, չի ի խօսիլ ձեւէն ինին մասնաւոր առանձնաշնորհով մը չիյնալէ զատ անկորչելի հ-ն ալ իր մէջ լուծած է, մինչ անցեալ անկատար չէի խօսեր, չէինք խօսեր, չէիք խօսեր եւ չէին խօսեր ձեւերուն մէջ նոյն կի ձայնը մնացած է անփոփոխ:

Հ. Ա. Ղ. կը պնդէ որ չուզեր, չառնէր եայլն ձեւերուն մէջ չաէն վերջ, ինկած ինիին տեղ ապաթարց դնենք. բայց չպահանջեր որ չեմ ի խօսիլ ձեւէն ալ երբ ինին ինայ՝ ապաթարց դնենք ու գրենք չեմ՝ խօսիր, չես՝ խօսիր եայլն: Նաեւ չպահանջեր որ չի ի ձեւէն ինկած ինիին տեղն ալ ապաթարց դնելով չի խօսիր գրենք. հակասութիւններ:

Կ'առարկէ նաեւ թէ չիտիւր գրելու ատեն քանի որ առաջին վանկը ձայնաւոր չունի, ո՞ւր պիտի դնենք չեշտը: (Այո՛, ձայնաւոր չունի. . . աչքին համար, բայց ականջին համար ունի): Ատով ըսել կ'ուզէ թէ առանց ձայնաւորի ալ. . . վանկ կ'ըլլայ եղեր: (Աս արդէն արտառոցու-

թեան խորանարդ կարողութիւնն է)։ Արեւէն աւելի պարզ է թէ առանց ձայնաւորի վանկ չըլլար. ուրիմն չխօսիր-ին առաջին վանկին ձայնաւորը ինչ որ է (ըթ է) մենք ալ ան կը չեշտենք, չխօսիր։ (Շեշտաւորը թի մասին չպիտի-ին առթիւ խօսեցայ արգէն)։

Հ. Ա. Ղ. ձանձրալի դառնալու աստիճան՝ յաճախ բանադէճի մէջ կը բերէ իր հայ լեզուի սէրը, անով կը ջանայ զօրացնել իր փաստերը, և անով կը ջանայ համոզուելու տրամադրել ընթերցողները։ Բայց սէրը երբեմն անգութ է, և իր սիրածը կը խոշտանդէ ալ, ինչպէս վերը տեսանք արդէն։ Ատկէ զատ Հայր Արսէն թող ինքզինք չնոյնացնէ հայ լեզուին հետ. մարդ կրնայ ձմեռուկն ալ սիրել, ինչ որ չնշանակիր թէ անոր հետ նոյնացած է. ուստի թող կարծել չտայ թէ ինք ինչ որ կ'ըսէ հայ լեզուն է որ կ'ըսէ։ Ատկէ ալ զատ Հ. Ա. Ղ. թող հաճի զիտնալ թէ հայերէնը զոնէ իրեն չափ կը սիրեն նաև անոնք որ առանց իր զիրութեանց մէկ հարիւրորդը ունենալու, կը ջանան սովորել ու սերտել զայն։ Ահա օրինակ՝ Կեսարացի Արքահամ աղան, բարեհամբոյր ալեւոր ծերունի մը որ հակառակ 50-60նոց մը ըլլալուն, դեռ կը ջանայ հայերէն սովորել ու խօսիլ, խնդիր չէ թէ ո՞րքան դժուարութիւն քաշէ. նա ևս Հ. Ա. Ղ. էն կամ ինծմէ պակաս չսիրեր հայ լեզուն։ Հայ լեզուն սիրելը միայն Հայր Արսէնին մենաշնորհը չէ։

Շարունակելի

Խ. Պ. ՔԱՐՏԱՇ



Ձ Բ Օ Ս Ա Ն Ք

Լամար իմաստուն՝ Հոմերոսի համար գէշ կը խօսէր, չէր հաւնէր։ Կառն Բանաստեղծ ուղեց Հոմերոսի պաշտպան րլլալ։ Լամար՝ Կառնի գրածին պատասխան չդրեց։ Բանաստեղծը կ'ըսէ. «Իմ շինած Հոմերոսի Զասագովութեան պատասխան չայլ չես ուղեր, կը վախնաս որ ի՞նչ պատասխան որ քան՝ ամոր պատասխանն ալ կ'առնես։ Բայց լուռ կեցալովդ պատասխան առնել չես ազատիւ։ Գիբ մըն ալ պիտի հաճեմ»։ Լամարի Լաւրան Պատասխան անուցով։»

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ, Համեմատական-Քննական Ուսումնասիրութիւն։ Գրեց Գոկա, Հ. Ա. Պետանցր Վ. Մատիկեան։ Վիեննա, 1930, երես 341, Գին Ժր. 4, — Ազգ. Մատ. Թիւ ՀԻԶ։

(Շար. նախորդ րիւկն ևս վերջ)

Հատորիս Բ. Մասը բաժնուած է երեք գլուխներու։ Առաջինին նիւթը կը կազմեն Արայ Գեղեցիկի համապատասխան ստատիկներ։ Հակիրճ նախարանէ մը յետոյ հեղինակը նկատողութեան կ'առնէ հետեւալ առասպելները. բարեկական Թամուզի և Իշդարի (էջ 174-184). փրնիկեան Ագոնիսի և Բաալթի կամ յունական Ափրոդիտէի (էջ 184-194). եղիպտական Ոսիրիսի և Իսիսի (էջ 194-199). փոլիզիական Ատալիսի և Կիւրեղէի կամ Ազգիստիսի (էջ 199-214). և ապա ասոնց հասարակաց գիծերը կը մատնանչէ մէկ կողմէն, և միւս կողմէն ալ երեան կը հանէ իւրաքանչիւրին մասնայատուկ յաւելուածական կէտերը (էջ 214-244)։

Տակաւին ստուգապէս չի գիտցուիր թէ այս առասպելը ո՞րեկէ կ'առնէ իր ծագումը։ Սակայն նկատի առնելով շատ մը փաստեր Մատիկեան կը գրէ. «Գարմանք չէ, եթէ հեղինակութիւն ունեցող գիտնականներ կը միտին այսօր հաստատուել թէ մեռնող, սգացող և յարուիրն առնող աստուծոյ պաշտօնը փոխախախտ ծագում ունի» (230-1)։

Երկրորդ գլուխին նիւթն է Արայ Գեղեցիկի յոյն մատենագրութեան մէջ։ Մատիկեանի նկատողութեան համաձայն «հոս քննութեան առարկայ եղող գրեթէ բոլոր հարցերն ալ՝ Պլատոնի ծանօթ հաստատածն իսկ մէջը հաշուելով, տակաւին վիճելի նիւթեր են» (244)։ Հեղինակը Արայի տեսակէտով հետզհետէ նկատողութեան կ'առնէ քանի մը զրոյցներ իբր «համեմատական առասպելներ, որոնց Արայի առասպելին հետ նոյնութիւնը կամ գէթ ներքին սերտ ազդեցով կապուած ըլլալը փաստերը պէտք է ցուցնեն» (245)։ Նիկոնիսի անունով հին վիպը (էջ 245-255)։ — Ասիկա «հատակաւոր է աւելի և ամբողջական վէպին թեւրես հազիւ փոքրիկ մէկ բնկորը կացուցանէ» (246)։ Սոյն վէպը «Հայաստանի մասին շատ թանկագին տողեր պարունակելով հանդերձ՝ ի նպաստ Արայի առասպելի»